ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 10.05.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-30/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.12.2015թ. թիվ 1/73-1/38826-15 գրությամբ ներկայացված «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01204713) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-30/17 բողոք), ՀՀ ֆինանսների նախարարության 30.11.2015թ. թիվ 93/[986931] գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 23.12.2015թ. թիվ 1/10-12/23 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, պարզեց.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 08.12.2015թ. թիվ 1/73-1/38826-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում

ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված կազմակերպությանը Ցուցակում ներառելու համար:

2. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 14.12.2015թ. թիվ 01/04.1/3712-15 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Ընկերությունը 23.12.2015թ. թիվ 1/10-12/23 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ մասնակցելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տեսակոնֆերանսի սարքերի ձեռքբերման, տեղադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/13» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), ճանաչվել է որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի գնային առաջարկը կազմել է ***178 500 000 ՀՀ դրամ***:

Ընկերությունը ներկայացրել է որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշը բավարարող փաստաթուղթ նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացված թվով 16 պայմանագրերի պատճենները, որոնց շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը, գումարային արտահայտությամբ, պակաս չէ Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի ***(178 500 000 ՀՀ դրամ)*** հիսուն տոկոսից, որոնցից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը, գումարային արտահայտությամբ, կազմել է՝ ***35 751 486 ՀՀ դրամ,*** որի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ Ընթացակարգի շրջանակներում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտնել է, որ ներկայացրել է նաև վերը նշված պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար տվյալ պայմանագրերի կողմերի հաստատած՝ պայմանագրերի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Պատվիրատուի կողմից Ընկերության հայտը մերժվել է, քանի որ ներկայացված վերը նշված պայմանագրերից թվով 6 պայմանագրերով նախատեսված ծառայությունների մատուցումը կատարվել է պայմանագրերով սահմանված ժամկետների խախտմամբ:

Ընկերությունը հայտնել է, որ ծառայությունները մատուցվել են ժամկետների խախտմամբ ոչ վերջինիս մեղքով, բացի այդ լրիվ և ամբողջ ծավալով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն կատարել է իր ստանձնած պարտավորությունները:

Մասնավորապես՝

ա) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի կողմից պայմանագիրը ստորագրվել է ***23.04.2012թ.***, ինչպես պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր ապրանքի մատակարարումն իրականացնել տվյալ պայմանագրի ուժի մեջ մտնելուց 1 աշխատանքային օրվա ընթացքում: Քանի որ հաջորդ օրը՝ ***24.04.2012թ.*** ոչ աշխատանքային օր էր, այդ ինչպես պատճառով ***25.04.2012թ.*** ստանալով ստորագրված պայմանագիրը՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հաջորդ օրը՝ ***26.04.2012թ.*** իրականացրել է պայմանագրով նախատեսված ***29 570 322 ՀՀ դրամ*** արժողությամբ բոլոր ապրանքների մատակարարումը:

Ըստ Ընկերության՝ Պատվիրատուն հաշվի չի առել, որ ընդամենը 1 օր ուշացումով պայմանագրի կատարումը չի առաջացել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի մեղքով, պայմանագիրը կատարվել է պատշաճ կերպով և պայմանագրով նախատեսված գումարն ամբողջությամբ վճարվել է Ընկերությանը:

բ) Քանի որ, թե Հայաստանյաց առաքելական եկեղեցու և թե «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի մոտ հնարավոր չի եղել գտնել պատշաճ ձևով հաստատված երկկողմանի ակտը, ուստի Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացվել է «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի՝ որպես 2013թ. օգոստոսի 21-ի N 09Գ/013 պայմանագրով մատակարարման համար նախատեսված ապրանքի վերջնական ստացողի, օգտագործողի և ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի Հրավերով նախատեսված փաստաթղթերի ցանկում հստակ ամրագրված են տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, բացառությամբ առանց որևիցե տարբերություն սահմանելու գնորդի և նրա կողմից նշանակված ստացողի միջև:

գ) Քանի որ սարքավորումների տեղադրման համար նախատեսված տարածքներում դեռևս կատարվում էին շինվերանորոգման աշխատանքներ, ուստի «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ ***27.08.2013թ.*** կնքված 26-ՍՆ

պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետի խախտումը տեղի է ունեցել ոչ Ընկերության մեղքով, ինչի վերաբերյալ առկա է «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ որպես վերը նշված Պայմանագրով մատակարարման համար նախատեսված ապրանքի վերջնական ստացողի, օգտագործողի և ընդունած կողմի գրավոր հավաստումը:

դ) Ընկերության կողմից զուտ մեխանիկական սխալի պատճառով Ընթացակարգին չտրամադրված ՀՀ ֆինանսների նախարարության հետ 2014թ. հուլիսի 4-ին կնքված պայմանագրի 9.1 կետով նախատեսված 05.08.2014թ. կնքված N 1 համաձայնագիրը, որը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կարող էր ստանալ հենց ՀՀ ֆինանսների նախարարությունից, արդյունքում պայմանագրով սահմանված ժամկետների խախտման հարցը տվյալ պայմանագրի կապակցությամբ պարզապես չէր առաջանա:

ե) Քանի որ սարքավորումների տեղադրման համար նախատեսված տարածքներում դեռևս կատարվում էին շինվերանորոգման աշխատանքներ, ուստի «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ-ի հետ 23.09.2014թ. կնքված 190/14 պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետի խախտումը տեղի է ունեցել ոչ Ընկերության մեղքով, ինչի մասին վկայում է այն փաստը, որ «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով նախատեսված գումարն առանց որևիցե պահումների լիովին վճարվել է Ընկերությանը:

ը) «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն լիովին և առանց որևիցե վերապահումների ընդունում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որակավորումը ՀՀ ԿԲ-ի հետ 11.06.2014թ. կնքված N 21/110614-1 ծածկագրով պայմանագրի վերաբերյալ: Մատակարարումը կատարվել է ժամկետի խախտմամբ Ընկերության մեղքով, ինչի համար «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն վճարել է տույժ՝ 16 104 ՀՀ դրամի չափով պայմանագրի 4 026 000 ՀՀ դրամ ընդհանուր գումարից:

3. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 30.11.2015թ. թիվ 93/[986931] գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից տեսակոնֆերանսի սարքերի ձեռքբերման, տեղադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/13» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն:

Հայտերի բացման նիստում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի՝ նախկինում պատշաճ կատարված համանման (նմանատիպ) պայմանագրերում հայտնաբերված անհամապատասխանությունը շտկելու համար կասեցվել է հանձնաժողովի նիստը և հրավերով սահմանված կարգով հնարավորություն է տրվել շտկելու անհամապատասխանությունը:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հանձնաժողովին է ներկայացրել Ընթացակարգի հրավերի 8.1 կետի համաձայն շտկված փաստաթղթերը՝ նախկինում պատշաճ կատարված համանման (նմանատիպ) պայմանագրերի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող շտկված փաստաթղթերը գնահատելու համար հրավիրված նիստում գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը գնահատվել է անբավարար հրավերով սահմանված պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ՝ նախկինում կատարված պայմանագրերի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (նաև հանրագումարային ծավալը) գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից՝ ընդ որում մեկ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Պատվիրատուն նշել է, որ Ընկերությունը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հանձնաժողովի որոշմամբ մերժվել է Ընկերության հայտը և Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին:

<u>4. ՍՑ-ԳԲԽ-30/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 08.12.2015թ. թիվ 1/73-1/38826-15 գրությամբ ներկայացված «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տեսակոնֆերանսի սարքերի ձեռքբերման, տեղադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/13» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն:

2. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի գնային առաջարկը կազմել է ***178 500 000 ՀՀ դրամ***:

3. Ընկերությունը, որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հաստատող փաստաթուղթ, ներկայացրել է Ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում ***պատշաճ ձևով իրականացված թվով 16 պայմանագրեր,*** որոնց ընդհանուր ***արժեքը կազմել է 179 590 890 ՀՀ դրամ:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.09.2015թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի N 5 արձանագրությամբ որոշել է՝ 2.1 կետի «բ» ենթակետով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին, իսկ «գ» ենթակետով՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***<u>09.10.2015թ. ժամը 10:00-ին</u>*** տեղի ունեցած նիստի N 8 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ ուսումնասիրելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող շտկված փաստաթղթերը, գտել է, որ նախկինում կատարված պայմանագրերով նախատեսված ապրանքների մատակարարումները կատարվել են պայմանագրով սահմանված ժամկետի խախտմամբ, մասնավորապես՝

ա) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ 2012թ. ապրիլի 23-ին կնքված պայմանագրի հետ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությամբ մատակարարումը ***կատարվել է ժամկետից ուշացումով:***

բ) «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ 2013թ. օգոստոսի 27-ին կնքված պայմանագրով սահմանված ժամկետում կատարումը հավաստող հանձնման-ընդունման արձանագրությամբ մատակարարումը ***կատարվել է ժամկետից ուշացումով:***

գ) Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հետ 2013թ. օգոստոսի 21-ին կնքված մատակարարման պայմանագրով սահմանված ժամկետում կատարումը հավաստող ***տեղեկանքը տրված չէ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի «Գնորդի» կողմից:***

դ) ՀՀ ֆինանսների նախարարության հետ 2014թ. հուլիսի 4-ին կնքված պայմանագրից բացակայում են ***պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի հավելված 2-ը, պայմանագրի 9.1 կետով նախատեսված համաձայնագիրը:***

ե) «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ-ի հետ 2014թ. սեպտեմբերի 23-ին կնքված պայմանագրով սահմանված ժամկետում կատարումը հավաստող հանձնման-ընդունման արձանագրությամբ մատակարարումը ***կատարվել է ժամկետից ուշացումով:***

զ) ՀՀ կենտրոնական բանկի հետ 2014թ. հունիսի 11-ին կնքված պայմանագրով ապրանքների մատակարարումը հավաստող հանձնման-ընդունման արձանագրությամբ մատակարարումը ***կատարվել է ժամկետից ուշացումով:***

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության 2-րդ կետի «ա» ենթակետով որոշել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար հետևյալ հիմնավորմամբ, որ նախկինում կատարված պայմանագրերի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը) գումարային արտահայտությամբ, պակաս է Ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից՝ ընդ որում մեկ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության 2-րդ կետի «բ» ենթակետով որոշել է մերժել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հետևյալ հիմնավորմամբ՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորումը հավաստող չափանիշը գնահատելու համար ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերում սահմանված պահանջներին:

8. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն Ընթացակարգով ներկայացրել է «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի (այսուհետ՝ ԲԿ) կողմից ***<u>06.10.2015թ. տրված տեղեկանքը</u>***, որում նշվել է, որ ԲԿ-ն հանդիսացել է Ընկերության և Հայաստանյաց Առաքելական եկեղեցու միջև 2013թ. օգոստոսի 21-ին կնքված թիվ 09Գ/013 պայմանագրով մատակարարման համար նախատեսված ապրանքի վերջնական ստացող, օգտագործող և **<u>ընդունած կողմ</u>**: ԲԿ-ն նույն տեղեկանքով հավաստել է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն լրիվ ծավալով և պատշաճ ձևով

կատարել է վերը նշված պայմանագրով իր կողմից ստանձնած բոլոր պարտավորությունները:

9. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ներկայացրել է «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ ՊՈԱԿ) կողմից տրամադրված 22.12.2015թ. թիվ 506 տեղեկանքը, որում նշվել է, որ ՊՈԱԿ-ը որպես 27.08.2013թ. թիվ 26 ՍՆ պայմանագրով մատակարարման համար նախատեսված ապրանքի վերջնական ստացող, օգտագործող և ընդունած կողմ հայտնում և հավաստում է, որ Ընկերությունը լրիվ ծավալով ***(35 751 486 ՀՀ դրամի)*** և պատշաճ ձևով կատարել է վերը նշված պայմանագրով իր կողմից ստանձնած բոլոր պարտականությունները: Միևնույն ժամանակ ՊՈԱԿ-ը տեղեկացրել է, որ ապրանքի (սարքավորումների) մատակարարումը, տեղադրումը, միացումը, փորձարկումը և պատվիրատուի անձնակազմի ուսուցումն իրականացվել է ***պայմանագրով նախատեսված ժամկետների որոշ ուշացումով, քանի որ սարքավորումների տեղադրման համար նախատեսված ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ին պատկանող տարածքներում դեռևս կատարվում էին շինարարական և վերանորոգման աշխատանքներ:***

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-30/17 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ***գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 65-րդ կետի համաձայն՝ մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետում սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Այսպիսով, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տեսակոնֆերանսի սարքերի ձեռքբերման, տեղադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/13» ծածկագրով գնումների հայտարարությունը

նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի գնային առաջարկը կազմել է ***178 500 000 ՀՀ դրամ***:

Պատվիրատուն «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել է, քանի որ «Մասնագիտական փորձառություն» որակավորումը հավաստող չափանիշը գնահատելու համար ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին:

ՀՀ ֆինանսների նախարարությունն Ընկերության կողմից հայտով ներկայացրած «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստող նախկինում կատարած թվով 16 պայմանագրերից՝ 6-ը գնահատել է ոչ պատշաճ կատարված, մասնավորապես, ըստ տվյալ պայմանագրերի կողմերի հաստատած ***պայմանագրերի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենի կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմերի գրավոր հավաստման*** «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ-ի, ՀՀ կենտրոնական բանկի հետ կնքված պայմանագրերը *կատարվել են ժամկետի ուշացումով*, ՀՀ ֆինանսների նախարարության հետ 2014թ. հուլիսի 4-ին կնքված պայմանագրից բացակայում են պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի հավելված 2-ը, պայմանագրի 9.1 կետով նախատեսված համաձայնագիրը, Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հետ 2013թ. օգոստոսի 21-ին կնքված մատակարարման պայմանագրով սահմանված ժամկետում կատարումը հավաստող ***տեղեկանքը տրված չէ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի «Գնորդի» կողմից:***

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն Ընթացակարգով ներկայացրել է «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի կողմից 06.10.2015թ. տրված տեղեկանքը, որում նշվել է, որ ԲԿ-ն հանդիսացել է Ընկերության և Հայաստանյաց Առաքելական եկեղեցու միջև 2013թ. օգոստոսի 21-ին կնքված թիվ 09Գ/013 պայմանագրով մատակարարման համար նախատեսված ապրանքի վերջնական ստացող, օգտագործող և **ընդունած կողմ**: ԲԿ-ն նույն տեղեկանքով հավաստել է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն լրիվ ծավալով և պատշաճ ձևով կատարել է վերը նշված պայմանագրով իր կողմից ստանձնած բոլոր պարտավորությունները:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի հայտնած այն դիրքորոշմանը, որ Ընկերության և Հայաստանյաց Առաքելական եկեղեցու միջև 2013թ. օգոստոսի 21-ին կնքված թիվ 09Գ/013

պայմանագրով սահմանված ժամկետում կատարումը հավաստող ***տեղեկանքը տրված չէ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի «Գնորդի» կողմից,*** ապա նշված պայմանագրի 3.2 կետով սահմանվել է, որ ապրանքի մատակարարումը, տեղադրումը, գործարկումը և հանձնում-ընդունումը կատարվում է գնորդի և մատակարարի ներկայացուցիչների կողմից հետևյալ հասցեով՝ ***ք. Երևան, Հ. Ներսիսյան փակուղի 69, «Իզմիրլյան» բժշկական կենտրոն:***

Այսինքն, ԲԿ-ն հանդիսանալով որպես տվյալ պայմանագրով նախատեսված ապրանքի վերջնական ստացող, այն է՝ ***պայմանագրի կատարումն ընդունած կողմ, հավաստել է վերը նշված տեղեկանքով,*** որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից նշված պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորությունները լրիվ ծավալով ***(23 692 800 դրամի)*** և պատշաճ ձևով կատարվել են:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ներկայացրել է «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ ՊՈԱԿ) կողմից տրամադրված 22.12.2015թ. թիվ 506 տեղեկանքը, որում նշվել է, որ ՊՈԱԿ-ը որպես 27.08.2013թ. թիվ 26 ՍՆ պայմանագրով մատակարարման համար նախատեսված ապրանքի վերջնական ստացող, օգտագործող և ընդունած կողմ հայտնում և հավաստում է, որ Ընկերությունը լրիվ ծավալով ***(35 751 486 դրամի)*** և պատշաճ ձևով կատարել է վերը նշված պայմանագրով իր կողմից ստանձնած բոլոր պարտականությունները: Միևնույն ժամանակ, ՊՈԱԿ-ը տեղեկացրել է, որ ապրանքի (սարքավորումների) մատակարարումը, տեղադրումը, միացումը, փորձարկումը և պատվիրատուի անձնակազմի ուսուցումն իրականացվել են պայմանագրով նախատեսված ժամկետների որոշ ուշացումով, քանի որ սարքավորումների տեղադրման համար նախատեսված ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ին պատկանող տարածքներում դեռևս կատարվում էին շինարարական և վերանորոգման աշխատանքներ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստող փաստաթղթերի գնահատելու համար, Ընթացակարգով ներկայացված Ընկերության և «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 27.08.2013թ. կնքված 26-ՍՆ պայմանագրով նախատեսված ապրանքը ողջ ծավալով մատակարարվել է ՊՈԱԿ-ին, ուստի Ընկերության կողմից թույլ չի տրվել տվյալ պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտում, ինչը հավաստվել է նաև Գնորդի՝ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված տեղեկանքով:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերության և «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 27.08.2013թ. կնքված 26-ՍՆ պայմանագիրը կարող է համարվել

նմանատիպ, քանի որ դրա շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ կազմել է ***35 751 486*** ***ՀՀ դրամ***, որը պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի (***178 500 000 ՀՀ դրամ)*** քսան տոկոսից՝ ***35 700 000 ՀՀ դրամից***:

Խորհուրդն, ուսումնասիրելով Ընկերության և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի միջև ***2012թ. ապրիլի 23-ին*** կնքված պայմանագիրը, պարզել է, որ համաձայն նույն պայմանագրի 3.1 կետի՝ Ընկերությունը պարտավոր էր ապրանքի մատակարարումն իրականացնել տվյալ պայմանագրի ուժի մեջ մտնելուց 1 աշխատանքային օրվա ընթացքում, այդ իսկ պատճառով ***25.04.2012թ.*** ստանալով ստորագրված պայմանագիրը (***24.04.2012թ.*** ոչ աշխատանքային օր էր)՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հաջորդ օրը՝ ***26.04.2012թ.*** իրականացրել է պայմանագրով նախատեսված ***29 570 322 ՀՀ դրամ*** արժողությամբ բոլոր ապրանքների մատակարարումը:

Խորհուրդն արձանագրում է, որ նման պայմաններում 1 օր ուշացումով պայմանագրի կատարումը չի առաջացել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի մեղքով, ուստի այն կատարվել է պատշաճ, որի արդյունքում պայմանագրով նախատեսված գումարն ամբողջությամբ վճարվել է Ընկերությանը:

Ինչ վերաբերում է ՀՀ կենտրոնական բանկի հետ 2014թ. հունիսի 11-ին կնքված պայմանագրին, ապա Ընկերությունն ընդունել է, որ այն հանդիսացել է ոչ պատշաճ, քանի որ մատակարարումը կատարվել է ժամկետի խախտմամբ Ընկերության մեղքով, ինչի արդյունքում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն վճարել է տույժ՝ 16 104 ՀՀ դրամի չափով պայմանագրի 4 026 000 ՀՀ դրամ ընդհանուր գումարից:

Այսպիսով, Խորհուրդը չանդրադառնալով Պատվիրատուի կողմից հայտը մերժելու հիմքում դրված Ընկերության ներկայացված մյուս թվով 4 պայմանագրերին՝ գտնում է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացված ***Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հետ 2013թ. օգոստոսի 21-ին կնքված թիվ 09Գ/013 և «ՁԻԱ կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ 27.08.2013թ. կնքված թիվ 26-ՍՆ պայմանագրերը կատարվել են պատշաճ և ողջ ծավալով՝ ընդհանուրը 59 444 286 ՀՀ դրամի:***

Հաշվի առնելով այն փաստը, որ Պատվիրատուն «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Ընկերության կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատելու համար ներկայացված փաստաթղթերը՝ վերը նշված թվով 6 պայմանագրերի մասով չեն

համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ուստի հասկանալի է, որ Պատվիրատուի կողմից Ընկերության ներկայացրած մնացած՝ թվով 10 պայմանագրերը համարվել են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հետևաբար, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ***պատշաճ կատարման տեսանկյունից, գնահատման է ենթակա մասնակցի կողմից նախկինում կատարված և ամբողջությամբ ավարտված պայմանագրերը:***

Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում ***պատշաճ ձևով իրականացրել է*** առնվազն թվով 12 պայմանագրեր, որոնց ընդհանուր արժեքը ***կազմել է 130 583 172 ՀՀ դրամ***, ընդ որում, դրանց շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից **(89 250 000 ՀՀ դրամից)**, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից **(35 700 000 ՀՀ դրամից)**:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն Ընկերության հայտը գնահատելիս առաջնորդվել է ***Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետով,*** որով սահմանվել է նաև, որ պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ անհրաժեշտ է ներկայացնել տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի ***սահմանված ժամկետում*** կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճեն կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Խորհուրդն ուսումնասիրելով Ընկերության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող թվով 12 պայմանագրերի պատճենները, այնուամենայնիվ գտնում է, որ դրանք ***կարող են համարվել որպես մասնակցի կողմից պատշաճ իրականացված, նախկինում պատշաճ կատարված և ամբողջությամբ ավարտված պայմանագրեր և որպես արդյունք՝ կարող են դիտարկվել Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներին բավարարող:***

Այսպիսով, նման պայմաններում առկա չէ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 08.12.2015թ. թիվ 1/73-1/38826-15 գրությամբ ներկայացված «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01204713) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Հայրապետյան Գևորգ**

Անդամ՝ **Հովհաննիսյան Ռուզաննա**